



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2020 թվականի թիվ 56-Ա

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի /այսուհետ՝ Մարզպետարան/ գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 31-ի N 34-Ա հրամանով անցկացված ծառայողական քննության արդյունքներն ու դրա հիման վրա 2020 թվականի փետրվարի 14-ին կազմված եզրակացությունը և ղեկավարվելով „Քաղաքացիական ծառայության մասին“ Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի „բ“ պարբերության պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ սահմանված կարգի 46-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 156-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Միսակ Մելքումյանի կողմից Այրում համայնքի բնակիչ Յուրիկ Դավթյանի ներկայացված դիմումով բարձրացված հարցին սահմանված կարգով և ժամկետում ընթացք չտալու, կատարման ընթացքը պատշաճ չվերահսկելու համար, Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Տիգրան Մուշեղյանի նկատմամբ նշանակել թեթև կարգապահական տույժ՝ „Նկատողություն“:

2. Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի վարիչին՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տեղեկացնել Տիգրան Մուշեղյանին:

Հ. ՉՈՒԲԱՆՅԱՆ

X

2020թ. փետրվարի 18
ք. Իջևան